

**ԱՂԱՎՆԻ ԺՎՄԿՈՉՅԱՆ  
Պատմական գիտությունների թեկնածու**

## **ԴՎԻՆ-ՊԱՐՏԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՎԱՂ ՄԻԶՆԱԴԱՐՈՒՄ (V-IX դր.)**

Դվին-Պարտավ ճանապարհի անդրանիկ ուսումնասիրողը ակադ. Հ. Մանանյանն է:

Վաստակաշատ գիտմական արաք աշխարհագետների<sup>2</sup>, Հովհաննես Դրասխանակերտցու<sup>3</sup> և Ստեփանոս Օրբելյանի<sup>4</sup> հաղորդումների հիման վրա գիտական հանրությանն է ներկայացրել այդ ճանապարհի հիմնական ուղղությունները, կայարանների ու հանգրվանների տեղադրությունը, ինչպես նաև դրանց հետ կապված աշխարհագրական հասկացությունները: Աշխատության մեջ սակայն ներկայացվում է Դվին-Պարտավ ճանապարհի գործառնության միայն մի ժամանակահատվածը՝ X-XIII դր.:

Իրականում, Հայաստան միշնաշխարհը հյուսիս-արևելյան հատվածի հետ կապող այս կարևոր օղակը, երբեմնի վերեքրով ու վայրէջքով, պատմական բոլոր փուլերում եղել է տարածաշրջանի կենդանի կյանքի զարգացման հիմնավոր զարկերակը:

Հայտնի են Դվին-Պարտավ մայրուղու երկու ուղղությունները՝ ա) Դվին-Երևան-Սևան-Բերդկունք-Գավառ-Կոթ-Մաքենիս-Սողոք-Հաթերք-Կաղամկատովք-Պարտավ, թ) Դվին-Սիսաշան, (Բաշ-Նորաշեն)-Աղբենի-Կոթ-Մաքենիս-Սողոք-Հաթերք-Կաղամկատովք-Պարտավ:

Շանապարհի երկրորդ ուղղության մասին կայարանների որոշ ճշտումներով հաջող քննություն է կատարել պրոֆ. Բ. Հարությունյանը<sup>5</sup> հրապարակելով պատմական դեպքերի և իրողությունների հետ կապված ուշադրությունից վրիպած որոշ հանգրվանների գոյության փաստը:

Դվինից Սևանի ավագանով Պարտավ համար ճանապարհի առաջին ուղղության մասին ակադ. Հ. Մանանյանի ուսումնասիրությունը մինչև օրս էլ համարվում է գիտական ամենահաջող վերլուծությունը: Սակայն երեսունական թվականների հնագիտական զյուտերի, վիմագրական տեղեկությունների և ամրաշինական կառուցմերի փաստացի տվյալների բացակայության պայմաններում անհնարին էր հիմնավորել կայարաններից յուրաքանչյուրի պատմական բուն նշանակությունը:

Ուսումնասիրվող ճանապարհի մենակետը Դվինն է՝ V-IX դր. տարածաշրջանի ամենահզոր ու զարգացած առևտրա-արիեստավորական կենտրոնը (ինչպես սասանյան՝ V-VII դր., այնպես էլ արարական տիրապետության VII-IX դր. ժամանակաշրջանում), և

<sup>1</sup> Հ. Մանանյան, Դվին-Պարտավ իին ճանապարհը, Երկեր, հագոր Ե, Ե., 1984, լք 192-213:

<sup>2</sup> Livres des routes et de royaumes, ed Goeje, Bibl, Geogr. Arab. I, լք 193:

<sup>3</sup> Ցովիանու կարողիկոսի Դրասխանակերպություն, Պարմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

<sup>4</sup> Ստեփանոս Օրբելյան, Պարմութիւն և անձնագիր Սիսական, Թիֆլիս, 1910:

<sup>5</sup> Բ. Հարությունյան, Դվին-Պարտավ ճանապարհի Sisajan-Gelakun. զժամանակ, Պարմա-բանասիրական հանդիս, 1968, N 1, լք 213-220:

այդ մասին շրջանառու է գիտական գրականության մի ընդարձակ ցանկ<sup>6</sup>:

Երկրորդ կալարանը Երևանն էր, որի մասին մատենագրական առաջին հիշատակությունը պահպանված է «Գիրք թղթոց»-ում՝ կապված Արքահամ Կաթողիկոսի 607 թ. հրավիրած ժողովի հետ. «Եւթև ու տասներորդ ամի Ապերուէզ Խոսրովու արքայից արքայի, իմ Արքահամու Հայոց Կաթողիկոսի և արքուակցաց իմոց... և ...իշխանաց և աշխարհականաց և ուղարքառաց առաջի կացեալ Թէոդորոս սեպհական Գնդին Եպիսկոպոս... Յափետան Առիվարդայ, Դամիք Երևանայ, Խամայէ Գատնոյ...»<sup>7</sup>:

V-IX դդ. Երևանի Զշանավոր բնակավայր լինելու մասին արձանագրվում է նաև հնագիտական հուշարձաններով (Պողոս-Պետրոս եկեղեցի) և դրամական գանձերով՝ Շապուհ I (241-272 թթ.), Հազկերտ I (399-420 թթ.), Պերողի (459-484 թթ.), Կավադ I-ի (488-496 թթ., 498-531 թթ.), Խոսրով I-ի (531-579 թթ.), Հերակլեսի և Հերակլի Կոստանտինի (610-641 թթ.) դրամներով:

Անկասկած, գործել են Երևանից ընդհանոր մայրուղուն հաղորդակցվող երկրորդական ճանապարհներ, որոնք Ավանը (VI դ. հակաթոռ եկեղեցիով)<sup>8</sup>, Ջրվեժը (Վաղ միջնադարյան դամբարանադաշտով և եկեղեցական համալիրներով)<sup>9</sup>, Կոտայքը (ճարտարապետական կոթողներով և խաչանշան կմիջով)<sup>10</sup>, Արամուսը<sup>11</sup> կապել են Հայաստանի հյուսիս-արևելյան հատվածին:

Երևանից ճանապարհը Կոտայքով, Հրազդան գետի երկայնքով ձգվում էր դեպի Սևան լիի ավագան, ոյը Բերդկումքը Զշանավոր Աղեկալա ամրոցով հաշօրդ հանգրվանն էր: Դժբախտաբար, հուշարձանը հետազոտված է սուկ իրու կիկլոպյան ամրոց<sup>12</sup>, թեև պահպանված են Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի<sup>13</sup> գրառումներն, ոյը Աղեկալան հիշատակվում է որպես միջնադարյան «ազատ» քաղաքներից մեկը: Այս փաստը հաստատվում է նաև U. Բարխուդարյանի հավաքած ամենավայ՝ 1274 թ. կրող վիմագիր արձանագրությամբ<sup>14</sup>:

Սակայն դիտելի է, որ հուշարձանների շրջապատում պահպանված են մատունների և այլ շինությունների ավերակներ, որոնց մասնագիտական հետազոտությունը լուս կափուր

<sup>6</sup> Կ. Ղաֆարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, 1952, հ. II, 1982, A. Kalantaryan, Dvin, Histoire et Archéologie de la ville medicavale, Paris, 1996, Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում V-XIV դդ., Ե., 1983, և այլն:

<sup>7</sup> «Գիրք թղթոց», Մագլենակութիւնն ևախնական, Թիֆլիս, 1901, էջ 150-151:

<sup>8</sup> Կ. Ղաֆարյան, Ավանի Տրկինգվան ծածկազիր արձանագրությունը, Ե., 1945:

<sup>9</sup> Հ. Տօքարսկի, Ճքրչք, թ. I, Ե., 1957, թ. II, 1964, Ա. Ժամելյան, Ջրվեժի վաղ միջնադարյան դամբարանները, Պալրմա-քանախիրական հանդես, 1986 թ. N 1, էջ 220-225:

<sup>10</sup> Ե. Խանգառյան, Լար-Դարանի, Ե., 1979, էջ 50:

<sup>11</sup> Սրբեհանոս Օքրելյան, Եշվ. աշխ., էջ 91:

<sup>12</sup> Գ. Միքայելյան, Անանա պահանջման կիկլոպյան ամրոցները (Հայաստանի հնագիրական հուշարձանները), պրակ I, Ե., 1968, աղ. 22ա:

<sup>13</sup> Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց, Տնիկագիր Գնդարքունի Ծովագարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 39 և 438:

<sup>14</sup> Ա. Բարխուդարյան, Գնդարքունիիք, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի շրջաններ: «Դիվան հայ վիմագրության», Պրակ IV, Ե., 1973, էջ 116, արձանագրություն 473:

բնակավայրի ավելի վաղ շերտերի վրա: Բերդկունքից ճամապարհը հասնում էր Գեղարքունիք (Գավառ): Դատելով հնագիտական զույթի քննություններից, դրամական գանձեր՝ Խոսրով I (531-579 թթ.), Կավաղ I (488-496 թթ., 498-531 թթ.), Զամասպի (496-498 թթ.), Վարահրամ V (420-438 թթ.), Շապուհ II (309-379 թթ.)<sup>15</sup>, Կահիքի<sup>16</sup>և արծաթե շքեր սպասքի<sup>17</sup> (արծաթե չորս թաւ և երկու գդալ), կարելի է ենթադրել, որ բնակավայրը եղել է տարածաշրջանի պատմա-մշակութային մի կարևոր օջախ: Մյուս կողմից, հիշյալ գանձերով թերևս հաստատվի Եղիշեի հայտնի այն սողերի հսկվությունը, որ Սասանյան Պարսկաստանը հայ նախարարներին կաշառելու նպատակով նրանց շնորհում էր թանկարժեք իրեր և կոչումներ: «Բերեալ էր և յարքունուստ քազմութիւն կարասոյ և միում միում կաշառ գաղտ խթէր ի պատճառս պարզէի և պատույ. և բազում նենգութեամբ զանմեղ մարդիկ հրապուրեր և լինքն արկանէր»<sup>18</sup>:

Ավելացնենք, որ Գ. Միջնադարյան Գավառի «Բերդի Գլուխ» կոչված ամրոցում նկատել է վաղ միջնադարյան շինարարական հրոհուների հետքեր, որոնք, իր հետաքրքրության շրջանակից դուրս լինելու պատճառով, ուսումնահրության չի ենթարկել<sup>19</sup>:

Կործ (Ասխիկին Աղյաման, Ներքին Գետաշեն), հետևյալ այն կայարանն էր, որը խաչաձև կույտ էին Սյունիքից և Ալրարատից եկող ուղիները: Այստեղ հայտնաբերվել են սասաւան արծաթե դրամական գանձեր<sup>20</sup>: Շատ կարևոր է Գագիկ I-ի կողմից կառուցված պանդոկների վերաբերյալ արձանագրությունը, որը, Ս. Բարիտուդարյանի կարծքով, իբրև հիշատակագրություն, փորագրվել է որմնաքարերից մեկի վրա և միայն ավերումից հետո ագուցվել IX դ. կառուցված Ս. Աստվածածին եկեղեցու պատի շարվածքում: Ուրեմն, միջնադարում քարավանատների կառուցումը եղել է պետական հոգածության առարկա:<sup>21</sup>

Սևանա լճի ամրաշինական կառուցները վերջին տարիներին հետազոտվում են հայ-իտալական միացյալ արշավախմբի համատեղ շանքերով և արդյունքում շատ խնդիրների հետ միայն պարզվել է նաև, որ ամրոցների 65%-ը կրում է միջնադարյան կառուցապատման և բնակեցման հետքեր:

Կործ հարևանությամբ Ալ-Բերդ միջնադարյան ամրոցը ժամանակին ուզմա-ստրատեգիական կարևոր դեր է խաղացել տարածաշրջանի պաշտպանությունն ապահովելու համար: Ասողիկը, բյուզանդական կայսր Թեոփիլոսի (829-842 թթ.) միջագետքյան արշավանքները և վերջինիս կործանած բնակավայրերն ու ամրոցները թվելիս, հիշատակում է

<sup>15</sup> Խ. Մուշենյան, Խշ. աշխ., լք 118 (Հայաստանի Պարմության Պևքական թանգարան, N 14917-14922):

<sup>16</sup> E. KHURSHUDIAN, DIE SASANIDISCHE GEMMENSAMMLUNG DES STATSMUSEUMS FÜR DIE GESCHICHTE ARMENIENS, ARCHAEOLOGISCHE MITTEILUNGEN AUS IRAN, BAND 28, 1995-1996, լք 334:

<sup>17</sup> A. Kalantaryan, Խշ. աշխ., աղ. 27, նկ. 52:

<sup>18</sup> Եղիշե, Վասն Վարդանյա և Հայոց պատրիարքմին, Ե., 1957, լք 64:

<sup>19</sup> Գ. Միջնադարյան, Խշ. աշխ., լք 19:

<sup>20</sup> Հայաստանի Պարմության Պևքական թանգարան, N 1116-1120:

<sup>21</sup> Ս. Բարիտուդարյան, Խշ. աշխ., լք 7, արձանագրություն 1017:

\* Հ. Հակոբյանի բանավոր հաղորդումներով իր կողմից իրականացված պեղումների ժամանակ Սևիշին կարավանարան հարևանությամբ Ազարակ բնակավայրում բացվել է բատակուի հարակագծով մի շինության ավերակներ, որն, իր ներարդությամբ, ծառայել է իբրև մաքսագործություն շաբթ գրամարանական մի ներարդություն գլուխ գրարածքում գործող աշխարհիկ շինությունների համար:

Զաև Ալ-Քերդը<sup>22</sup>:

Դվին-Պարտավ ճանապարհի այս բանուկ հատվածում գործել են նաև երկրորդական եղթուղիներ, որոնց շնորհիվ Ալյարատը հաղորդակցվել է Գեղարքունիքին, բնականաբար, այնտեղից էլ՝ Հայատանի հյուսիս-արևելյան հատվածին: Այդպիսի եղթուղիներից մեկը, ըստ Ս. Լիսիցյանի<sup>23</sup>, անցել է Վետի գետի հոսանքին հակառակ ուղղությամբ և, կտրելով Գեղամա լեռները՝ իջել Արգիծի հովիտ (Աղրիշա), ալեռութեան Սևանա լճի հարավային մասերով՝ Կորով, Թարթառով, Բաւել Պարտավ: Այս ճանապարհի կարևորության չափանիշ կարող են ծառալել Աղրիշայի հովտում բնակչության խսության աստիճանը, բուշարձանների առատությունը, սասանյան դրամական արժեքավոր գանձերի առկայության փաստը: Աղրիշայի հովտի տարածքից հայտնաբերվել է Հազկերտ I-ի (399-420 թթ.), Պերողի (456-484 թթ.), Կավադ I-ի (488-496 թթ., 498-553 թթ.), Զամասպի (496-498 թթ.), Խոսրով I-ի (531-579 թթ.), Շապուհ II-ի (309-379 թթ.) և սասանյան այլ տիրակալների դրամները: Ավելացնենք, որ ժամանակին Ե. Լալայանը տեղում արձանագրել է միջնադարյան բազում բնակատեղները<sup>24</sup>:

Մայր երթուղում միացող երկրորդական ճանապարհներից էր «ձկան» ճանապարհը, որը կոտայքը կապում էր Սևանի ավագանենին: Շամապարհի ամրաշինական համակարգի ողջ շղթայում Բեյլի Կյուու, Քարեն Ճի, Տաթե, Նախշարաքան, Բերդի դար և այլ բուշարձաններում, արձանագրված են միջնադարյան բնակավայրերի հզոր շերտերը<sup>25</sup>:

Մայրուղու հաջորդ կարևոր կայսրանը Մաքենիսն էր, որը հիմնականում հայտնի է IX դ. Գրիգոր Սուփանի կողմից կառուցված եկեղեցիով և աղբյուղներում հիշատակվում է իրու հոչակելի «Ուստոն Մաքենացցոց»<sup>26</sup>: Սակայն վաճքի պարհսպներից դուրս Ե. Լալայանը հիշատակում է երկու ավերակ մատուռների հետքեր, որոնք, ամենայն հավանականությամբ, կառուցվել են V-VII դր.<sup>27</sup>: Ավելացնենք, որ Գրիգոր Սուփանի կառուցած եկեղեցու պատերի շարվածքում պահպանված են սրբառաշ քարի վրա Դաճինեն առյուծների գրում Աստվածաշնչական թեմայով գեղաքանակ մի հորինվածք, ինչպես նաև արքայական երթի տեսարանի մի հատված՝ ձիու գեղեցիկ քանդակով: Երկու կոթողներն էլ V-VII դր. քանդակագործական պատկերագրության նմուշներ են<sup>28</sup>:

Նկատի առնելով Մովսես Խորենացու «Եւ վկայ քեզ ի մօստայ երաշխատորեսցէ եկեղեցիաստէ զիր Եւսեբի Կեսարացւոյ»<sup>29</sup> արտահայտությունը, Հ. Ն. Ակինյանը<sup>30</sup> ենթադրում է, որ Մովսես Խորենացին Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական պատմությանը ծանոթա-

<sup>22</sup> Տիգենքավան Պարմութիւն Սպիտականոս վարդապետի Տարօնեցոյ (Ասողիկ), Ս. Պակնըրորդ, 1885, էջ 144:

<sup>23</sup> Ս. Լիսիցյան, ՌՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Ե., 1940, էջ 28-29:

<sup>24</sup> Ե. Լալայան, Գեղարքունիք կամ Նոր-Բայազենի զալատ, Ազգագրական հանդես XVIII, 1908 թ., N 2, էջ 48-49:

<sup>25</sup> Ժ. Խաչատրյան, Ա. Քալանթարյան, Մարգունու և Վարդենիսի հուշարձանները, Տնօնքագիր հասարակական զիգուտյանների, 1972, N 1, էջ 58-67:

<sup>26</sup> Սփյուփանոս Օքքեյան, Եղվ. աշխ., էջ 159:

<sup>27</sup> Ե. Լալայան, Եղվ. աշխ., էջ 19, 75:

<sup>28</sup> Ս. Մեացականյան, Հայկական ճարպարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960, էջ 71, նկ. 40, 41:

<sup>29</sup> Մովսեսի Խորենացոյ Պարմութիւն Դայոց, Թիֆին, 1913, էջ 120:

<sup>30</sup> Հ. Ակինյան, Մաքենազգուան հերթագործություններ, հ. Գ, էջ 185, ծանոթ. 3:

ցել է Գեղարքունիքում (Մաքենիսում, Ա.Ժ.): Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ, այս տեղ է ճգնած նաև Ստեփաննոս Սյունեցիզ<sup>31</sup>:

Ի վերջո, Մովսես Կաղանկատվացին գրում է, որ Հայոց ՄՀԶ թվականին (827) Մաքենիսը արաբների կողմից հիմնահատակ կործանվում է. «Եւ անտի ի միս տարին Էանց Բարան ի գաւառն Գեղարքունի.... և զՄէծ մայրաքաղաքն Մաքենացւոց, այրեաց, մնաց միայն շրաղացն և այլ ոչ ինչ և էր թիւն Հայոց ՄՀԶ»<sup>32</sup>.

Մովսես Խորենացու ժամանակագրության վիճակարուց խնդրին անդրադառնալու միտում չունենք, բայց VIII դարում, եթե այնտեղ ճգնած է Ստեփաննոս Սյունեցիզ, իսկ մինչ արաբների հարձակումը՝ Կաղանկատվացին այն անվանում է «մայրաքաղաք», փաստական հիշատակությունները ակնհայտ են դարձնում, որ Մաքենիսը Դվին-Պարտսավ ճանապարհանատվածի կրթամշակութային կենտրոն էր, որ ուսումնառություն են ստացել հայության ու մշակույթի նշանավոր դեմքերը:

Սոդքը Դվին-Պարտսավ ճանապարհի հաշմերուկային հաջորդ հանգուցակետն էր, անցորդների հանգրվան, մինչև օրս պահպանված կարավանատան ավերակներով: Սոդք գավառը մինչև Աղվանից մարզպանության կազմավորումը Մավկեաց (Արցախ) աշխարհի կազմում էր և միայն սասանյանների վարչա-տարածքային նոր բաժանումների պատճառով մնաց միշնացիսարի կազմում: Սոդքից ճանապարհը երկճյուղվում էր: Մի կողմից Արցախը էր հասնում Վայկունիք գավառով, որի կենտրոնը Մարն էր<sup>33</sup>: Այստեղ, ըստ երևույթին, պաշտպանական կարևոր ամրոցի դեր էր կատարում Հարամարերող, որի մասին մատենագրական հիշատակությունները վերաբերվում են IX դարին, թեև տեղում ստույգ պահպանված են ավելի վաղ կառուցի հետքերը: Այսպես, Մ. Կաղանկատվացին գրում է, որ այն կառուցվել է IX դարում, Սահմ Սմբատյանն որդի Աստրելսեհի կողմից: «Սա Աստրելսեհ շինէ զբերդն Հանդու և զապարանն իւր եղեալ ի գիտն, որ կոչի Վայունիք ուր և Բաղանիք արքունական են»<sup>34</sup>: Ամրոցի հետազոտական աշխատանքները պարզել են, որ այն, իիրու պաշտպանական համեստ կառուց (19x16 չափի հատակագծով), օգտագործվել է տակավին V դարից և միայն IX դարում Աստրելսեհն այն վերակառուցել է ժամանակի համար վայել շինարվեստով<sup>35</sup>: Անկասկած, ամրոցը Դվին-Պարտսավ ճանապարհի պաշտպանական կարևոր կառուցաներից էր, և վնասզի դեպքում կարող էին այնտեղ պատսպարվել մայրուիդով երթևեկողները:

Սոդքից հաջորդ ուղին, թեև կարճ, բայց ոժվարանցելի, անցնում էր Սոդքի լեռնանցքով, Թարթառ գետի երկայնքով և միանում էր Հայերքում մյուս ուղղությամբ հասնող ճանապարհին, ապա շարունակվում դեպի Պարտսավ: Մինչև Պարտսավ հասնելը, պաշտպանական կարևոր ամրոց էր Չարաքերդը, որ պատերազմի ժամանակ ապահովում էր մարդկանց անվտանգությունը, բնականարար՝ նաև անցորդների: Մովսես Կաղանկատվացին այդ մասին գրում է. «Եւ ժողովեալ առ ինքն կաթողիկոսին զամենայն զգլիաւորս, զորդիս

<sup>31</sup> Ստեփաննոս Օրբելյան, Եշվ. աշխ., լք 173, 208:

<sup>32</sup> Մովսես Կաղանկատվացի, Պարմուիին Աղուանից աշխարհի, Ե., 1983, լք 327:

<sup>33</sup> Անահինա Շիրակացի, Մաքենազիւթյուն, Ե., 1979, լք 295:

<sup>34</sup> Մ. Կաղանկատվացի, Եշվ. աշխ., լք 340:

<sup>35</sup> Հ. Կարապետյան, Պատմություն արմանակության վերաբերյալ, Ե., 2000, լք 22:

թագաւորազանց մեծաց աշխարհին, զգաւորապես և զգիլապեսու, գերիցուն և զսարկաւագուն և զդայիր, որ ի ժամուն անդ յանդիպեցան յամրոցին Զարաքերդոյ»<sup>36</sup>:

Հայու «Մղնաչափի»,<sup>37</sup> Պարտավից ճանապարհը շարունակվում էր: Անցնելով Ծամախիով, Ծարերանով և այլ կենտրոնակերով, համառ էր Հյուսիսային Կովկաս: Խակ Վերջինիս խոցելի դարպասը Դերենտն էր, որտեղից կազմակերպվում էին բուների և խազարների Եթե 387 թվականից այն մշտապես վերահսկվում էր Գուգարաց և Ծավարշականը Եթե: Եթե 387 թվականից այն մշտապես վերահսկվում էր Արանց պարտականությունը, ապա V դարում այն վստահված էր Սյունյաց տեղերին:

Դվին-Պարտավ-Հյուսիսային Կովկաս մայրուղու երթևեկության ամենաաշխալով ժամանակաշրջանը VI-VII դարերն էին, հատկապես, երբ 572-591 թթ. պարսկա-բյուզանդական պատերազմը խափանում էր Բարձրավագը բանուկ ճանապարհների գործունեությունը, և Բյուզանդիա-Միջին Ասիայի հաղորդակցման հիմնական զարկերակը փոխադրված էր Հյուսիսային Կովկաս և Սևծովյան հատված: Ասվածը հավաստվում է Հյուսիսային Կովկասում իրականացված պեղումներով, որ հայտնաբերվել են V-VII դդ. մետաքսատեսակների շատ արժեքավոր պատուիկներ, որոնց մի մասն ունի միջինասիական ծագում (ինենցիքներ), իսկ մի մասը՝ բյուզանդական<sup>38</sup> և համաժամանակյա դրամական գանձերը, կամքաները, բյուզանդական խաչերը և այլն<sup>39</sup>:

Բարտողը հյուսիս-կովկասյան ճանապարհաբառվածի կապերը դիտում է մի կողմից հարակից Փայտակարանով Արդերի, իսկ հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ Գանձակ և Վրաստամ, հարավում է՝ դեպի Հայաստան՝ Դվին<sup>40</sup>:

Դվին-Պարտավ ճանապարհով Հայոց միջնաշխարին հյուսիս-արևնելյան հատվածին միացնող ուղղմավարական այս կարևոր օղակը նպաստում էր երկտեղ տնտեսական, մշակութային, ուղղմական կապերի ապահովմանը: Ծամապարին դազմատրատեղիական կարևոր կառուց էր, որով պատերազմի ժամանակ ապահովվում էր ուղղմական ուժի, զենքի և զինամթերքի փոխադրական խնդիրները: Հայտնի է, որ Խալիսալի (Շեմախիի մոտ) ճակատամարտից հետո Վասակի ուխտադրության լուրն առնելուն պես, Վարդան Մամիկոնյանը որոշում է ընդունում անմիջապես վերադառնալ Այրարատ. «Եւ ասացեալ զայս երանելույն՝ չուեցին միաբան ամեներեւան յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց ի գաւառն Այրարատոյ. և անդ զաւորս դառնաշունչ օրոյ ձմեռայնոյն ըստ սովորութեան իւրեանց...»<sup>41</sup>:

Զմեռվա ցրտաշունչ պայմաններում, ըստ Մովսես Կաղամկատվացու, Օրանք տեղ հասա երեսուն օրում. «Զու արարեալ Վարդանայ մեծաւ աւարաւ, ամորտում ուրախու-

<sup>36</sup> Մ. Կաղամկարվացի, Խշկ. աշխ., Լք 157:

<sup>37</sup> Վ. Մանանյան, Խորնեացու արևմտվածի լուծումը, Ե., 1934, Լք 86:

<sup>38</sup> А. Иерусалимская, О северокавказском "шелковой пути" в районе средневековья, Советская археология, 1967, N 2, Լք 55:

<sup>39</sup> Е. Крупнов, О культурных связях Северного Кавказа по археологическим данным. "Ученые записки Кабардинского НИИ", Нальчик, 1947, с. 221.

<sup>40</sup> В. Бартольд, Место Прискальских областей в истории мусульманского мира, Баку, 1925, Լք 151-152:

<sup>41</sup> Ղազարյա Փարվեցոյ Պարմութին Հայոց և թուրք առ Վահան Մամիկոնյան, Թիֆլիս, 1907, II, Լք, Լք 143:

թեամբ, զոհութեամբ առ Աստուած և Առյին յուսովն հասաներ յերկիրն յատրու Հայոց Կրեսուն<sup>42</sup>.

Ամենայն հավանականությամբ, Վերադարձն իրականացվել է Պարտավ-Դվին մայրուղանը, քանի որ Փայտակարանում նստած էր պարսկական զորակայանը, և նման պայմաններում անհնարին էր զորավարի վերադարձը Այրարատ։ Այսունեսու, Ավարայրի ճակատամարտից հետո, հայ ուազմիկների մի ջոկատ, ինչպես հայտնի է, փորձեց հասնել Արցախ, սակայն նրանք տեղ չհասան՝ ճանապարհին կրած մեծագույն կորուստների պատճառով<sup>43</sup>։

Մեզ ամհայտ է Արցախի հասած մեկ այլ ջոկատի անցած ճանապարհը, բայց Եղիշեն հիշատակում է, որ նրանք ճակատամարտից հետո շարունակել են պայքարը բարձրաբերդ լեռներից. «Քանզի Բագումք յազգէ մեծ ճախարարացն էին, և նորար և որդիք և դստերը հանդերձ ամենալն սիրելեաօք իրենամ ի մէջ ամրական վայրացն, ոմանք յանոյս երկիրն Խաղողեաց և այլ բազումք ի կողման հարաւոյ՝ յանմատոյց ամուրսն Տմորեաց, և կէսքն ի թանձրախիտ մայրիսն Արցախոյ և այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին բռնեցան ի վերայ բազում ամրոցացն»<sup>44</sup>:

Դվիթ-Պարտավ ճանապարհը ուներ ճակ առևտրական կարևոր ճշանակություն: Դվիթն ու Պարտավն այդ ժամանակահատվածում տարածաշրջանի հզոր քաղաքներից էին, հայտնի իրենց բարձրորակ արտադրանքով, որոնք չեն Վրիպել ճանապարհորդների ուշադրությունից: Խակ հնագիտական բազմատեսակ արժեքները փաստացիորեն վկայում են արտադրված նմուշների բազմատեսակությունն ու բարձրորակությունը: Հայատանի սասանյան դրամական գանձերի շրջանառության ոլորտի հետազոտությունը հանգեցնում է այն հետևողաբար, որ V-VII դարերում սասանյան տիրակալների դիմանկարներով դրամներ հատելու իրավունքը վերապահվել է Դվիթ և Նախիջևան կենտրոններից<sup>45</sup>: Պախումովը, հավանաբար, Պարտավում հայտնաբերված սասանյան դրամական գանձերի առատությունից հետևող կարծում է, թե Վերջինն էլ Դվիթին և Նախիջևանին համազոր դրամներ հատելու իրավունքից էր օգտվում<sup>46</sup>:

Այսպիսով, ընդհանուր պատկերը հետևյալն է՝ սասանյան տիրապետության մեջը ողջ տարածաշրջանում առևտուն ու ապրանքադրամական շրջանառությունն իրականացվում էր Վերոիիշշալ կենտրոններում հատված դրամներով, որը մեկ անգամ ևս ապացուցվում է այդ ճանապարհով ապահովվող անմիջական կապերը։ Հայաստան միջնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածի առևտրական հարաբերությունների կայացման մի կարևոր ապացուց է Դվինից հայտնաբերված կնքադրոշմի և Հայաստանի Պատմության Պետական Թանգարանի N 2253 թվահամարի տակ պահպող Կնիքի պատկերի (ոճավորված ծառ) կրկնությունը։ Ենթադրում ենք, որ Ծեմախից ինչ-որ մի առևտրական իր տուր և առն իրականացրել է Վերոիիշշալ կնքրով և դրոշմը պահպանվել է Դվինում գտնված

<sup>42</sup> Մովսես Կադանկարպացի, Եղվ. աշխ., էջ 116:

<sup>43</sup> Սպեֆանոս Օռենյան, Խվ. աշխ., լթ 264-265:

**44** Եղիշե, Արա, աշխ., լ. 125:

<sup>45</sup> Խ. Մուշեղյան, [շպ], աշխ., [թ] 123:

<sup>46</sup> Е. Пахомов. О сасандских маштых землях. Доклады АНАЗ ССР т. I. Баку, 1945. № 45-46.

դրոշմակնիքի վրա<sup>47</sup>:

Դվին-Պարտավ ճանապարհը եղել է նաև մշակութային և հոգևոր կապերի ապահովման կարևոր միջոցներից մեկը: Աղվանքի հոգևոր-ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունը Ա. Յակոբսոնի հանգեցրել է այն հետևողաբան, որ V-VII դդ. շատ տաճարներ Աղվանքում և Հայաստանում հատակագծային առանձնահատկություններով և հրոհնվածքով շփման մեծ եզրեր ունեն: Օրինակ՝ Լեկիտի<sup>48</sup> տաճարը նա համարում է զգարժենոցատիպ (ինքը կամ ավելի փոքր չափերով), իսկ կումի տաճարը նմանեցնում հայկական զմբեթավոր բազիլիկաների (Մրեն, Բագավան, Գայանե): Հոգևոր անմիջական կապերի մի փայլուն օրինակ է Զվանշիրի ացեղությունը Հայաստան. «Գայր հասաներ յԱլյարատեան զաւան ուր ընդ առաջ լիներ նմա ի Մամիկոնեան տոհմէն քաջն Գրիգոր համօրէն ազատօքն և ածէ զնա ի գիշաքաղաքն իր Արուճ: Գայր հասաներ անդր աղաւան սուրբ սկզբեցոյ՝ մեծն Հայրապետն Հայոց Անաստան»<sup>49</sup>:

Հայաստանի երկու հատվածների եկեղեցական միասնությունը արտահայտվում էր քաղկեդոնականության դեմ մղվող պայքարի համատեղ շաճքերով: Եթե Հայաստան միշնաշխարհում, այնուհանդերձ, Բյուզանդական կայսրությունը դավանանքային պատակտիչ քաղաքականության իրազործմամբ բյուզանդական տիրապետության մասում ողջ կոտազում Ավան, Արամուս<sup>50</sup>, 590-607 թթ. հիմնեց Դվինի կաթողիկոսությանը հակաթոռ քաղկեդոնական աթոռամիսու, ապա այդ քարոզչության դեմ Հայաստանի հյուսիս-արևելքում ավելի սկզբունքային միջոցներ կիրառվեցին: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ, 704 թ. Պարտավում հրավիրված ժողովում Հայոց Եղիա Ա. Արճիշեցի կաթողիկոսը բողոք ներկայացրած իշխանների օգնությամբ Բակուր կաթողիկոսին և իրեն գործակից Աւարամ իշխանություն ձերբակալում են՝ քաղկեդոնականությունը ընդունելու պատճառով, նոր կաթողիկոս ընտրելով Հայոց եկեղեցական դավանանքին հավատարիմ Սիմեոնին:

Այսպիսով, վաղ միջնադարում Հայաստանի միշնաշխարհը հյուսիս-արևելյան հատվածի հետ կապող Դվին-Պարտավ ճանապարհը կենական բազմանշանակ կարևորության հաղորդակցման միջոց էր և ժամանակին պատմական մեծ նշանակություն ունեցավ:

<sup>47</sup> А. Калагян, Раписсердисовесковыс բոլոր Ճայռ (Архсөл. памятники Армении 13) Средневековые памятники, вып. V, Е., 1982, № 19, № 1:

<sup>48</sup> А. Яковсон, Архитектурные связи Капкаэского Албании и Армении, Պարմա-բանափական հանդիս, 1977, № 1, էջ 69-83: Ս. Կարապետյան, Նյուրաման մշակույթի հուշարձաններ Կոյր գետի ձախակինյա քաղաքաբանության մասին, «Հուշարձան», Ե., 19 էջ 81, № 1:

<sup>49</sup> Մովսես Կաղանկատվացի, Խշ. աշխ., էջ 195:

<sup>50</sup> Կ. Ղաֆարյան, Ավանի երկնօքային ծածկափառ արձանագրությունը, հետաքրքիր է, որ «Գիրք թղթոց»-ի մեջ Զորիկ Երևանցուն Ուխտանունդ հիշապես կույտ է որպան Զորիկ Արամունից (Արամոս, Ա.Շ.), Ուխտանն եպիփանություն, Պարմաթիմ բաժմանան Վրաց ի Հայոց, էջ 64: Սա ևս վկայում է, որ Ավանի և Արամոսի կապերը VII դարում Երևանի հետ շատ սերտ էին: